



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 16 -Ն

ք.Ստեփանակերտ

**ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 30-Ի ԹԻՎ 35/130 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ

1) նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով դահլիճներ և այլ շինություններ (այսուհետ՝ դահլիճ) անվճար հիմունքներով օգտագործելու համար թեկնածուները կամ նրանց լիազոր ներկայացուցիչները, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների լիազոր ներկայացուցիչները միջոցառման կազմակերպման օրվանից առնվազն 5 օր առաջ դիմում են ներկայացնում դահլիճը տնօրինող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարին.

2) դիմումում նշվում է դահլիճը, որտեղ անցկացվելու է միջոցառումը, միջոցառման օրը և ժամը, միջոցառման պատասխանատուի տվյալները (անուն, ազգանուն, փոստային հասցե, հեռախոսահամար), դիմումի տրման օրը, ամիսը, տարեթիվը.

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, դիմումատուին գրավոր տեղեկացնում է դահլիճ տրամադրելու մասին.

4) եթե դահլիճը դիմումատուի նշած ժամանակահատվածում հնարավոր չէ տրամադրել, ապա պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը պետք է առաջարկի այն ժամանակահատվածը, որի դեպքում հնարավոր է համապատասխան դահլիճի տրամադրումը կամ առաջարկի այլ դահլիճ.

5) դահլիճը նույն օրը և ժամին տրամադրելու մեկից ավելի դիմումների դեպքում, այն տրվում է այն թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին, որի դիմումն առաջինն է մուտքագրվել:

6) համապետական ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 20 օր հետո շրջվարչակազմի ղեկավարը (Ստեփանակերտի քաղաքապետը) դահլիճների ցանկը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնելիս նշում է նաև դրանց գտնվելու վայրը, նստատեղերի թիվը:

7) սույն կարգով նույն դահլիճը թեկնածուին, կուսակցությանը, կուսակցությունների դաշինքին տրամադրվում է մեկ անգամ և մինչև երեք ժամ տևողությամբ:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 30-ի «Ընտրությունների հետ կապված միջոցառումներ կազմակերպելու նպատակով թեկնածուներին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 35/130 որոշումը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ